

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Դեպքում Tiflis, Rédaction «Mschak».

Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ առն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Խմբագրութիւնը չի կրօնական կամ քաղաքական կողմնակցութիւն:

Խմբագրութիւնը տարածւում է 10 կոպեկով:

Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐՈՒՆԻ

ՄԵԼԻԸ ԵՄԵԼԵՆՈՎՆԱ ՄԱԿԱՐԵԱՆ

Վախճանվեց ծանր եւ երկարատեւ հիւանդութիւնէն յետոյ, որի մասին սրտի ցաւով յայտնում են նրա զուտները—Եւգենիա Պետրոսեան Շխեանց, Նունէ Պետրոսեան, Յովհաննէս Յարութիւնեան Հովսէփեանց եւ հանգուցեալի որդիքը Գրիգոր, Նիկողայ եւ Ալեքսանդր Պետրոսեան Մակարեանները եւ ինքնուրուի են ծանօթներին ու ազգականներին շնորհ բերել հոգեհանգստին ուրբաթ եւ շաբաթ օրերը՝ երեկոյեան 6 1/2 ժամին: Յուզարկաւորութիւնը—կիրակի, սեպտեմբերի 29-ին, առաւօտեան ժամի 10-ին, դէպի Վանքի եկեղեցին: Թաղման կարգը ժամի 12-ին:

1—2

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Նոյն հարցի մասին. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ի միջի այլոց. Խնչ անուն տանք. Բարեւոյժաբանի կոնցերտը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաղդադի երկաթուղին եւ Ռուսաստանը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՀԵՆՐԻԱՔԻՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍՍԻՐԱԿԱՆ. Էմիլ Զօլայի գրական գործը:

ՆՈՅՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Խօսելով գեղարուեստի զարգացման մասին, մենք անցեալ անգամ յայտնեցինք, որ մեր հասարակութեան մէջ գեղ. քիչ է զարգացած պահանջ գեղարուեստական ստեղծագործութիւնները եւ հող է պատրաստված գեղարուեստի գործողներին արդիւնաւէտ աշխատանքի համար: Պահանջի եւ ճաշակի պակասութեան շնորհիւ անպաշտպան են մնում այն անձինք, որոնք իրանց նուիրել են բացառապէս գեղարուեստին եւ ուրիշ աւելի վարձացած երկիրներում կարողանում են ապահովել իրանց կեանքը գեղարուեստին վերաբերեալ աշխատանքներով:

Մենք գիտաւորութիւն ունենք այս անգամ հարց յարուցանել շրջիկ ցուցահանդէսների կամ թանգարանների մասին, համարելով նրան այն միջոցներից մէկը, որով կարելի

է ժողովրդականացնել թէ գեղարուեստի եւ թէ գիտութեան ու արդիւնագործութեան արգասիքները: Օրինակ, կարելի կը լինէր մեր երկրում կազմակերպել նկարչական ստեղծագործութիւնների շրջիկ պատկերահանդէս, որ կը տեղափոխվէր որոշ յաճութեամբութեամբ քաղաքից քաղաք եւ կը ծանօթացնէր մեր գաւառացուն մի շարք նկարչական գործերի հետ:

Մենք նոյն-իսկ մի որոշ աստիճան փորձ ունենք արած այդ ուղղութեամբ: Հանգուցեալ կարա-Մուրզան ճանապարհորդելով մեր երկրի գաղազան տեղերում եւ կազմակերպելով երգերիկ խմբեր՝ շատ նպաստեց խմբական երգեցողութեան տարածվելուն մեր գաւառներում: Մեր թատրոնական գործիչները, ցրվելով ամեն տարի գաւառներում եւ տալով մի շարք ներկայացումներ, նպաստեցին տարածելու այն պիսիները, որոնք առաջ կազմում էին միայն Թիֆլիսի եւ Բագուի թատրոնային հասարակութեան արտօնութիւնը:

Նոյնը կարելի է անել եւ նկարչական ստեղծագործութիւնների վերաբերութեամբ: Ժողովելով թէ տեղական նկարիչները գործերը եւ թէ ուրիշ տեղերից բերած գեղարուեստական ստեղծագործութիւններ՝ կարելի է կազմել մի ուսանելի գեղերիկ հաւաքածու եւ այնուհետեւ նրան շրջեցնել մեր երկրի գաղազան տեղերում:

Դա կանուցիւրէր ուրիշ հիմունքներ ունի, որոնց վրա պիտի չեղանք, որովհետեւ նա պէտք է եւ օրինակ ծառայի նորերին, որովհետեւ մեծ յարգանք գործը պիտի ուղեցոյց դառնայ հասարակ մանկանացունքին:

Վիպասանութիւնը վաղուց է դուրս եկել իր վերացական ուղղութիւնից, երբ ամենամեծ վիպասանը նա էր համարվում, որի ֆանտազիան աւելի վառ էր եւ որի հերոսները աւելի գերմարդկային էին, իսկ շրջավայրը աւելի անբնական:

XIX դարի սկզբում գրականութեան յատկանիւն էր անբնականութիւն եւ շինծուութիւն թէ վէպի մէջ եւ դրամայի մէջ: Վիպասը Հիւգօի մեծ հանճարը որոշ ֆորմուլաների վերածեց տիրապետող ուղղութիւնը եւ նրա Հերմանին այդ դարձեց ծայրայեղ արտայայտութիւնը եւ դաւ:

Այն ժամանակները Բոմանտիկ դարձրեց ընդունված էր իւրեւ տիրապետող հոսանք գրականութեան մէջ, սրբագործված այնպիսի ուժեղների գրչով, ինչպէս էին Հիւգօն, Ալէքսանդր Դյումա հայրը, Սուլին եւ մի լեզէօն հետեւողներին: Զայրայած իրական կեանքի տաղտկութիւնից, Բոմանտիկ վիպասանները ձգտում էին բարձրանալ վեր, դէպի եթերը՝ բարձրութիւնները, արհամարհանքով նայում էին իրանց ռոմանտիկ տակ խլրտող ռոմանտիկ գոհ-հիկ եւ կեղտոտ իրական աշխարհի վրա:

Բոմանտիկ գրական հոսանքը իր երեւակայութեան մէջ ստեղծած աշխարհում էր ապրում, այնտեղ ընտելւում աւելի ճոխ էր, ծաղիկներն աւելի բուրավէտ, կանայք աւելի գեղեցիկ եւ աւելի չքման, մարդիկ բացառիկ էին: Բոմանտիկ գրական հոսանքը իր երեւակայութեան մէջ ստեղծած աշխարհում էր ապրում, այնտեղ ընտելւում աւելի ճոխ էր, ծաղիկներն աւելի բուրավէտ, կանայք աւելի գեղեցիկ եւ աւելի չքման, մարդիկ բացառիկ էին:

Սակայն գրականութեան մէջ երբեք չի տիրել

իրեւ մի շարժական ցուցահանդէս: Գաւառը կը սկսի ծանօթանալ գեղարուեստի գործերի հետ, հետաքրքրութիւն գրալ դէպի նոր տեսակ ստեղծագործութիւնը եւ զարգացնել պահանջ նրանց վերաբերութեամբ:

Այդ տեսակ փորձեր եղել են եւ կան Եւրոպայում եւ ունեցել են լաւ հետեւանքներ: Նոյնը կարելի է փորձել եւ մեզանում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի Մ Ի Զ Ի Ա Յ Լ Ո Ց

«Դուք այս րօպէիս նկատեցիք, — ընդհատեց խօսքս այդպիսի արխագ ծերունին, — որ մեր ազգի դուրագործութեան պատճառները մասամբ անմիջական կապ ունեն այն հանգամանքի հետ, որ մեր սերունդը, մանկութիւնից իւրացնելով դէպք կրելու սովորութիւնը, անգիտակցաբար զարգացնում է իր մէջ կուսութիւնական պահանջը, որը, պատահական անախորժութիւնների դէպքում, քուլեական բռնկումով ժամանակ, եղեւնագործութեամբ է արտայայտվում, որովհետեւ դէպի իւրաքանչիւր անհատի անձնական արժանաւորութիւնները մենք պատշաճ յարգանք չենք տառնում:

«Ես չեմ վիճում, — շարունակեց նա. — Ի հարկէ մենք դեռ քաղաքակրթված չենք, եղբայր. սիրովութեան վեհ հասկացողութիւնը դեռ չէ թափանցել մեր աշխարհայեցողութեան մէջ: Մեր ժողովրդական հողը կուլտուրական պլանտաճիւր արտադրելու ընդունակութիւնից տա-կալին զուրկ է, մինչդեռ սերմացանքն էլ չը կան:

«Դուք անանձնապէս չեղանք, որ կատարաւանակութիւնը մեր առանձին հովանաւորութիւնն է վայելում, ուստի ծագման նախապաշարմունքը թունդ զարգացած է մեր մէջ:

«Բայց արդեօք դուք, եւրոպական քաղաքակրթութեան հետեւողները, նմանօրինակ պատկառութիւններից ազատ էք: Ես ամենայն պատ-

րաստականութեամբ ձեզ կը յետ եւ նոյն-իսկ կը հետեւեմ ձեր խրատներին, եթէ կապացուցանէք, որ դուք աւելի կատարեալագործված էք մեզից: Զեր որդիքը գէշերի մէջ չեն սովորում, սակայն ասացե՛ք խնդրեմ, ինչով են նրանք զանազանվում մեզից թէ նախապաշարմունքի եւ թէ կեղծ կրթութեան կողմից: Վերջերէ հենց ձեր չեղած կատարականութիւնը:

«Եւ կարծիքով՝ իւրաքանչիւր գործողութիւն, որ այսպէս թէ այնպէս վերաւորելու բնաւորութիւն է կրում՝ դատապարտելի է ինչ ձեւով եւ կերպով որ աշտայայտվի նա: Ուշադրութիւն դարձրէ՛ք այս կայտառ մանկական խմբի եւ նրանց դատաւարակութիւնների վրա. ըստ երեւոյթին, բնութեան ծոցում մանկական ոսկի հասակը անհաւասարութիւն չը պիտի ունենայ. բայց, ինչպէս կը նկատէք, այստեղ էլ ձգտում են հմուտ մայրիկները թոյլ չը տալ գեմոկրատական խառնակութիւն:

«Համաձայնեցե՛ք, որ Բաթումի բուրժուա դատակարգի ընտանեկան պարտաճանաչութիւնը սահմանափակվում է նրանով միայն, որպէսզի տանտիկնոջ տուալտի չեղողութիւնը ճոխ եւ թաւով լինի. իսկ ինչ վերաբերում է կրթական, դատաւարակական ֆունկցիային, վերջինս կատարելապէս բոնանքների բարեհայեցողութեանն է յանձնված, որոնք իրանց կողմից առաւելութիւն տալով Ֆլիւրին՝ հսկում են միայն, որպէս զի «աղայի» տղան հաղորդակցութիւն չունենայ պլէբէյի որդու հետ:

«Անա ձեզ նմիթ, ուսումնասիրեցե՛ք, եւ եթէ ձեր հսկողութեան հետեւանքը հակադիր եղբայրակցութիւն կունենայ քան թէ իմ կարծիքը, այն ժամանակ ես ամենայն պատրաստակամութեամբ կը հրաժարվեմ մեր աւանդութիւնից: Եւ ծերունին ցոյց տուեց, մեզից քիչ հեռու, բուլվարի բացօթեայ բազմութեւ կատարող մանկական խաղը: Մի բաւական պարզապէս, 9 տարեկանի չափ երեխայ, ընդհանուր խմբի պարագլուխ դարձած՝ փոքրիկ խմբեր էր կազմել եւ հրամաններ էր տալիս, թէ ինչպէս պիտի աղջիկները (անգլիացիք) յարձակվեն Սպիտակօպի վրա, եւ ինչպէս տղաները (բոէրներ) պիտի պաշտպանեն: Փոքրիկ ընդհանուր

գրականութիւնը: Նրանք անխնայ ու տանջալից ջանքերով կամաց-կամաց բանդում էին յափշտակման վիպասանութեան փայլուն շէնքը, որպէս զի նրա փառասանների վրա կատուցանեն նատուրալիստ-գիտական կոչված դպրոցը:

Գիտութիւնը դուրս էր գալիս իր էմպիրիք դրութիւնից: Բիչան ու Կրեյվելէին անդամահատել էին մարդուն, Մաթանդին ուսումնասիրել էր նրա ներքին ֆունկցիաները, այն-ինչ մեծ Կրեյվելէն հանել էր հողի տակից կորած կենդանիների ոսկորները:

Յետոյ գալիս է Լամարկի թէօրիան, որով կենդանին ու բոլոր շրջավայրի (հողի, ջրի, օդի) արդիւնքն են դառնում, այս շրջավայրին յարմարվում թէօրիան էր—որը պիտի տանէր դէպի Դարվինի ուսուցած կերպարանափոխութեան թէօրիան:

Գիտական հոսանքները դրոշմում են իրանց կեղծ գեղարուեստի ու գրականութեան վրա: Մի քանի կրիտիկոսներ ահաբեւ են արել այս ազդեցողութեան խորութիւնը: Այս մի գիտելիք է, որը չափազանց անաւան են անում մեր վիպասաններից շատերը եւ գուցէ այդ է պատճառը, որ մենք այնքան յետ ենք մնում ընդհանուր եւրոպական գրական հոսանքներից: Այսպէս ամբարշտվում էր ու ապշեցնելու չափ ճոխանում բնական գիտութիւնը ընդհանրապէս եւ մարդու ճանաչումը մասնաւորապէս: Ուսումնասիրելից մարդը իբրեւ կենդանական անհատ, այսինքն նրա անատոմիան ու ֆիզիոլոգիան, ուսումնասիրելից նա նաեւ իբրեւ բանական էակ, իբրեւ հոգեբանական անհատ:

Այսպիսով մարդը, այս աշխարհի թաղաւորը, մանրագնացից, վերածվեց անատոմիական տարրերի—բջջիների, եւ գիտութիւնը ապացուցեց մի ապշեցնող փաստ, այն որ ա-

ԲԱՆԱՍՍԻՐԱԿԱՆ

ԷՄԻԼ ԶՕԼԱՅԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ

(Թուրքիի հայկացը)

Եւրոպայի գրական առաջնորդից իշու մի մեծ մարտնչող, մի զօրեղ յեղաշրջող ոյժ, որ իր հանճարի շնորհքով, իր բարեխիղճ ուսումնասիրութիւններով, իր վեհ բանաստեղծական թրուղիներով եւ իր անկաշառ ճշմարտախորութեամբ մի չը լաված—չը տեսնված ժողովրդապետութիւն էր ձեռք բերել ոչ միայն իր հայրենիքում, այլ եւ ամբողջ հոգեպաշտի վրա:

Անտարակոյս համաշխարհային գրականութեան մէջ դուք չէք գտնի մի ուրիշ նոյնչափ պողաբեր գրող, ինչպէս էր Էմիլ Զօլայն: Նա ինքը մեծ նշանակութիւն էր տալիս գործերի ճանապարհները. «Ես կը գրեմ, առում է նա ինքնաների մէկի բերանով, եւ իմ հեղինակութիւններից այնպիսի աշտարակ կը կանգնեցնեմ, որ անցողից օտարված լինի կանգ առնելու նրա մեծութեան առաջ»:

Եւ, յիշու, ահաբեւ է այս աշտարակը: Մէկը հաշուել է, որ եթէ նրա ծախված գրքերը իւրաքանչիւր գրքին, կը ստանանք մի աշտարակ, որի բարձրութիւնը 120 վերտա կը լինէր:

Այդ մի անկեղծ ապացոյց է Զօլայի անագին ժողովրդականութեան Անտարակոյս ոչ մի հեղինակ բացի այս մեծ բոմանտիստից, այնպիսի բան չէ տեսել, որ իր մի գրքը 100,000 օրինակ ապրի:

Սակայն մի հեղինակի արժէքը միշտ չի կարելի ժողովրդականութեամբ չափել: Եւ Զօլայի մեծ հեղինակութիւնը, նրա վիթխարի ժողովրդ-

հրամանատարը զարմանալի ճշգրտութեամբ արտասանում էր գնահատականները, Բոստոն, Դեյվիդս, Յոնքին, Բարդեն-Պոլեյ, —կրկնվում էին անընդհատ Յոնքին, երբ խաղը իր գագաթնակետին էր հասնում, ներդաշնակութիւնը խանգարվեց մի վայրենի ճիւղով:

—Պօղոս,—հրամայական եղանակով գոռաց յարգելի դաստիարակունքներ,—ինչպէս կը համարակվեն Աշոտի հետ խաղալը, ասոր հայրը ինչ մարդ է: մայրիկը քեզի չափաց նէ, որ Շոմանի հետ խաղաւ:

Սրբեան չիտեմքս եւ օրաւ վշտով հիւսաթափված հեռացաւ խմբից: Մի անհայտ չիտեմքս տեղի ունեցաւ, որ, սակայն, երկար չը տեւէր. խումբը փոքրիկ իրարանցումից յետոյ, որ խաղի ծրագիրը խանգարվեց մէկի հեռանալու պատճառով, արագ կերպով դարձեալ կազմակերպվեց, եւ խաղի փոթորիկը սկսվեց վարակիչ ուրախութեամբ: Իսկ իր ծագման ճորտ դարձած փոքրիկը, չը կարողանալով ստանալ տարբերակներ նայել խաղին եւ նախանձը երկար զսպարուց յետոյ միջոց յունենալով ազատվել էտիկետի վայրենի շրջանակից՝ մոխրութեւնները յանձնեց արտասուքի ջերմ հոսանքին:

Բայց ահա երկայնի հեկեկանքին պատահաբար մօտեցաւ մայրիկը, չըմպատված մի խումբ պիւտաներով: Ես միամտաբար ուրախացայ, հնարաւորով, որ կոպիտ դաստիարակունքին պատահած հատուցումը կը ստանայ տիկնոջից: Բայց ահա, պերճ մայրիկը կարճ բացատրութիւնից յետոյ սպառնալիք ուղղեց որդուն եւ հեռացաւ: «Հէ՛ր, հնց է...» սկսեց ծերունին:

Ես սաստիկ վերաւորված եւ վրդովված հրաժեշտ տուի ծերունուն եւ հեռացայ լուռ ու մունջ:

Տիրոսեան

ԻՆՉ ԱՆՈՒՆ ՏԱԼ
(Նամակ Բագուից)

Ինչպէս յայտնի է, բագուեցիներս ունենք թատրոնական ղեկավարներ, որոնք ի սէր եւ յանուն գեղարուեստի եւ մայրենի բնի, շատ ճանախ թողնում են իրանց ընթացիկ գործերը եւ զբաղվում են հայկական ներկայացումները կանոնաւորելու եւ գեղարուեստը բարձրացնելու խնդիրներով: Ահա այդ պարոնները որոշում են դեռ ձմեռվանից՝ խումբը պահել ներկայ 1902—1903 չըմանի համար եւ սկսում են բանակարութիւններ խմբի գլխաւոր ոյճերի հետ մարտաւարից, իսկ խումբը մայիս ամսին Բագուից անցնելիս՝ սկսում են պայմանաւորվել, ինչպէս երկրորդական դերասանների, նոյնպէս եւ տ. Սիրանոյի հետ: Ղեկավարների եւ տ. Սիրանոյի մէջ մի փոքր երկար է տեւում բանակցութիւնը, որովհետեւ տիկնոջից պահանջում էին որոշ զինաներ: Վերջապէս տիկնոյն իր «համաձայն եմ»-ը տաւ, բայց զրուար պայման

նաեւ օմիաբար մարդը ոչնչով չէ տար: Երբ վում ուրիշ կենդանիներին, եւ նա ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ մի կատարելագործված կապիկ...

Միւս կողմից գիւղերը յանդգնում էր զինել նոյնպէս եւ մարդու հոգին, ու պնդում էր, որ մարդու հոգեկան շարժումները վերածվում են հասարակ ֆիզիոլոգիական ակտիւթի, եւ մարդուս հոգեբանութիւնը անասունի ակտիւ հիմունքների վրա է հաստատված:

Դրական գիտութեան հետ զուգահեռաբար բարձրացնում էր իր գլուխը դական գրականութիւնը, եւ նատուրալիստ բոսանի արալոյսին մենք տեսնում ենք երկու համեստ, բայց հսկայ կերպարաններ:

Դրանք էին. Ստեղծալ ու Բաղդակ: Ստեղծալ, XIX դարի առաջին կէսի ամենամեծ հոգեգէտ վրաստանը (ինչպէս կոչում է նշան Տէնը) եւ Բաղդակը, մեծ լեզուաբանի, որ իր պարտքերը վճարելու համար գրում էր իր հռչակաւոր «Մարդկութեան կոմպոզիտ»:

Հաւատարմի գիտութեան տուած ցուցմունքներին՝ այս երկու գործը գրիչները մանրախառնում էին կենսաբան, ուսումնասիրում միջնակարգի ազդեցութիւնը մարդու մտքի եւ հոգու վրա:

Բաղդակը նատուրալիզմի հրաշալի չէնքի առաջին հիմնադրարն էր դնում, իսկ Ստեղծալը՝ հոգեբանական դպրոցի:

Այնուհետեւ բոսանի ուղին գծված էր. —նա պիտի գրեալական լինէր, եւ եթէ ուղղում էր զարգացալ եւ ժամանակի հետ ընթանալ:

Բաղդակը յանկարծ, բոսանիզմի երեւակայ-

չէ ստորագրում: Ենթադրված վերջնական փոփոխութիւնների համեմատ մի օրինակ արտագրւած չը լինելուն պատճառով, եւ աւելորդ էլ էր, քանի որ երկուստեք համաձայնութիւնը տրված խօսքը բաւական էր: Այդ խօսքը տալով՝ տ. Սիրանոյ մեկնում է Շուշի եւ այդ խօսքի հիման վրա՝ որոշած ժամանակին վերադառնում է Բագու: Եւ նրա հարցմունքին, թէ «ինչու ներկայացնելու պիտենք չին տալիս կարգաւոր», պատասխան է տաւում, թէ

—Դուք խմբում չէք, քանի որ պայմանը չէ ստորագրել:

Եւ այս կատարվում է—չեմ ուզում հաւատալ—մեր ինտելիգենտների շրջանում, օրը դերակով, հայ ազգի միակ առաջնակարգ գերասանունը նկատմամբ, որ ամբողջ հինգ տարիներ համարեալ միայնակ է կրել Բագուի խմբի ծանրութիւնը իր ուսերի վրա, եւ մենք դեռ պահանջում ենք կրթված գերասաններ: Երբ մենք այսպէս ենք փորձատրում, այսպէս ենք գնահատում անխնայ, երկարատեւ եւ անարատ աշխատութիւնը, ապա ուրեմն մենք ոչինչ արժանի չենք եւ շատ իսկ է այն՝ որ մենք ունենք այժմ: Սիրանոյ մի հասարակ արհեստագործ է: Նա իր ետեւ թողած է երեսուն տարիների մի շարք գործունէութիւն: Նա միակ հայ կիւնն է, որ նուիրվելով մայրենի բնին՝ այսօր քան երկար եւ յարատեւ գործունէութիւն ունեցած: Նա ընտ է դուրս եկել 1872 թւականին:

Ուրիշ ազգեր մինչեւ երկինք են բարձրացնում իրանց մի այսպիսի տաղանդաւոր արտիստունուն, որպիսին է տ. Սիրանոյ, իսկ մեզանում, ի նշան շնորհակալութեան, ի նշան քաջաբերութեան, յաճեալ հայ թատրոնի գաղափարի եւ գեղարուեստի, թատրոնի գոնեքը փակում ենք իր տիրոջ առաջ: Նրան, որ ամենքից առաջ իրաւունք ունէր մտնելու:

Եւ այս բոլորը կատարվում է հասարակութեան անունով, հասարակութեան փողբով: Եւ այս կատարողները ինտելիգենտներ են. եւ այս անողները գործի չեն եր լինելու յաւակնութիւնը ունենա:

Սեպուհ

ԲԱՐՈՆՈՂԻԱՐԱՆԻ ԿՕՆԳՐԵՏԸ

Երբիշ Ս. Բարոնադարեանի կոնգրեսը, որ կայացաւ Արտիստական ընկերութեան զանգուշում, նախ նշանակվել էր չափաւ օր, սեպտեմբերի 21-ին, բայց յետագայից երբիշ հիւանդութեան պատճառով սեպտեմբերի 25-ին Սալայի երկինք բոլորովին չէր բժշկվել, ուստի եւ անկարելի է վերջնական կարծիք յայտնել նրա ծայրի մասին: Ս. Բարոնադարեանի ծայրի վերջին նօստները կոնգրեսի օրը խուլ էին հնչում: Պ. Բարոնադարեանը իր երաժշտական կրթու-

ական աշխարհին հակադրեց իսկական մարդկային երկիրը,—գիւցարանակ էակելի ճանդէպ հանեց գոյութիւն ունեցող մարդկային դէմքեր իրանց կնճռված տանջալից ճակատով:

Նա առաջին «գիծի» եղաւ, որը յանդգնեց տալու հետ զարգացող բոսանիզմի դէմ եւ հրապարակօրէն քարկոծել նրա մեծ ներկայացուցչին—Վ. Հիւգօյին:

Յիւրեքը, ոգեւորված այս փորձով, գինված գիտութեան ուղեցոյցով, պիտի աւելի եւս հարթէր դարիս մեծագոյն նատուրալիստի, Չոլայի, ճանաչարները:

Բաղդակը կարծիք էր, որ Յիւրեքը բժշկի որդի լինէր: Բժշկականութեան առարկան մարդն է, առողջ ու հիւանդ մարդը, եւ Գիւստաւ Յիւրեքը տեղեակ էր այս գիտութեանը եւ ճանաչում էր մարդուն: Նրա գրչի տակ մարդիկ աւելի եւս մանրացան, եւ նրա հերոսները դառան մեր հայրերը, մեր զրագիրները, մենք ինքներս, մեր բոլոր մարդկային թուլութիւններով, գարշելի կրքերով եւ հրեշտակային առաքելութիւններով: Մարդը, իսկական մարդը, մերկացնում է մեր առջեւ իր հոգին, իր սիրտը, խօսում է մեր լեզուով, տեսնում է մեր աչքերով, զգում է մեր ներքինով, եւ Յիւրեքի «տիկնոյն Բոլմարն» կարգաւոր, դարձ տեսնում ենք մեր միջնակարգը ու լուռ զանազանում ենք հանրաժանօթ դէմքերը: Որքան ընտանի ու հասկանալի են մեզ այս տիպերը իրանց նիւստ ու կացով, իրանց հոգեբանութեան ամբողջ հիւստեւծով:

Որչափ հեռու ենք մենք այժմ Ալէքսանդր Դիւմալի անբնական աշխարհից, որքան հեռու Բոկամբոններից:

Գիտութիւն եւ գիտուն տիրեցին նրա պատմական վէպ «Մայրամբ» մէջ: Մի ամբողջ հերո-

թիւնը ստացել է իտալիայում յայտնի պրօֆեսոր «Օրադի» մօտ: Ունի լաւ շօյալ եւ գիտել ոգեւորվել Մեզ մի բան միայն տեղիք է տալիս մտածելու, որ պարոնի ծայր մեր կարծիքով աւելի բարիտոն է քան տէնօր Պարոնի ծայրից կարող էր լաւ դուրեկան բարիտոն դուրս գալ, եթէ ծայրին ուրիշ ուղղութիւն տրվէր: Մեր ասածների ապացոյց կարող է լինել այն՝ որ նրա երգածներին մէջ ամենաաղող նօսերը Ալամի «Մոնթան» հիմն» էր, որ գրած է առեւտարակ ցածր ծայրերի համար (բասի եւ բարիտոն): Այդ էր նրա երգած Չոլայի «Օրադի» «Օրադի» բոսանիստ Կոնգրեսին մասնակցում էին Նիքիւրիւմ քոյրերը, որոնք զուգարի վրա ճաշակով նուագեցին Լաուրէի «Saltarella»-ն: Պ. Կոնգրես շնորհալի ակօմպանիմատ էր Դանիելը կիսով չափ լի էր Ա. Մամաչան:

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 21-ին
Այս նամակով ձեռնհաս բանասերների ուշադրութիւնը հրաւիրում եմ Թիֆլիսի վրաց գրադարանում գտնված մի հին ձեռագրի վրա: Զեռագիրը գրված է խուցուրի կոչված գրերով, մաքուր մագաղաթի վրա: Գրութեան, մեր կարծիքով, իր մէջ պարունակում է ամբողջապէս կամ երգեր եւ կամ շարականներ Յայտնի է, որ վրացիներն իրանց թէ հին եկեղեցական եւ թէ նոր երգեցողութեան մէջ շարականներ չունեն, եւ շարական ունենալու շնորհն ունեն հայոց եկեղեցին եւ եկեղեցականները, եւ յոյները, եթէ չեմ սխալվում: Հետեւապէս վրաց այս ձեռագիրը պէտք է լինի՝ կամ մեր եկեղեցական երգերից եւ շարականներից փոխադրված, կամ խորագրված մի ամբողջութիւն եւ կամ հայերէնից եւ յունարէնից քաղված եւ կազմած մի ժամերգութիւն:

Եւ ահա, թէ ինչ նշաններ կան ինձ այդպէս կարծել տալու:—1) բառերի մէջ ձայնաւորների վրա դրված են մեր շարականների ձայնաւորները կամ ձայնախաղեր՝ ընչ բացառութեամբ: 2) Իւրաքանչիւր շարական կամ երգ կամ պարբերութիւն վերջանում է հայատառ, հայագիր բառերով եւ կամ նախադասութիւններով: այդ բառերից ոմանք, ինչպէս յայտնի երեւում է, մեր շարականներից մի քանիսն սկիզբն են օրինակ. «Նորոգեաց, լուսաւորեալ» եւ այլն: Հայ բառերը եւ նախադասութիւնները գրված են ամբողջապէս գլխագրերով եւ ոչ փոքր տառերով: Աւելորդ չեմ համարում մէջ բերել յիշեալ բառերից եւ նախադասութիւններից նաեւ հետեւեալները:—«Մոն ունդ» «Բիստոսի», «Յարեալ» «Տէր ողորմի Միքայիլ», «Գրեց Մեւորոպ», «Հայր մի, որ երկինս իս...» եւ այլն: Պէտք է նկատել եւ այն, որ իւրաքանչիւր վերջապող շարականի վերջին վրացերէն (խուցուրի) խօսքերը եւ նախադասութիւնները նոյն միտքն են արտայայտում, ինչ որ հայերէն բառերն ու նախադասութիւնները:

Սակայն կան նաեւ շարականներ, որոնց վերջը, ինչպէս հայերէնը, գրված են տունարէն գրե-

սական խոցեալ կենդանանում է մեր առջեւ իր վարք ու բարքով, իր գգեստ ու զրանով, իր նիւստ ու կացով, իր կրօնական զգացմունքներով եւ վայրենի ֆանտազիոսութեամբ, մինչեւ անգամ իր աշխարհագրութիւնով, իր պատմութիւնով: Բայց ամբողջում տալու պարտքը աշխատանքի պատու էր այդ փոքրիկ գիրքը:—հեղինակը պիտի ուսումնասիրէր յունաց եւ հոմալոցոց գրականութիւնը, պիտի քրքրէր արիւմեներ, կլանէր այն ամենը, ինչ որ կապ ունէր արեւմտեան հին պատմութեան հետ: Նա աւելի եւս վստաւ հուշեմալ կարող էր աւել իր մեծ ուսուցչի, Բաղդակի նման, թէ «Ո՛ր ոչ չը գիտէ, թէ որչափ ուսումնասիրութիւն ու դիտումներ են թաղնված այս մի քանի էջերի տակ»:

Դիտումն եւ ուսումնասիրութիւն—անհ նոստագ գրական ուղղութեան նշանաբանը: Դիտումն եւ ուսումնասիրութիւնները պիտի մի ուրիշ նոր սկզբունք եւս մտնէին վէպի մէջ—այդ օրէկ եւ ի վրէժն էր, այսինքն—գրողի ետի բացակայութիւնը, ուրիշ խօսքերով. բոսանիւստը իր նկարագրող ու պատմող է դառնում, եւ անտիպված է զսպել իր հաւաքականը ու հակակրօնը, իր զգումներն տնդում: Զէ որ գիտութիւնը կապ չունի անհատների հետ, չէ որ գիտնականը չէզօք պիտի մնայ, նա պիտի թողնի, որ ֆակտերը խօսեն: Այս սկզբունքը պիտի կամաց կամաց տանէր դէպի Զօլայի անգուպ ներկայացումները, մի բան, որը այնքան կշտամանքի ու հալածանքների տարիք տուեց մեծ բոսանիստի դէմ:

Ոչ մի գրական ուղղութիւն չէ կարող մի մարդու գրելով ստեղծվել, որքան էլ հանձնարեղ լինէր այս գրիչը:

Եւ յախադասութիւններ Այս ձեռագրի մէջ երգերի եւ շարականների վերջը հայերէն եւ յունարէն բառեր ու նախադասութիւններ գրվելու նպատակը մուկ եւ անհասկանալի չէր մնայ ի հարկէ, եթէ ձեռագիրը մնացած լինէր ամբողջովին, բայց ցաւօք արտի պէտք է հաղորդեմ, որ այս առաջարկը կայ եւ ոչ վերջարանը, այլ ձեռագրի միայն միջուկն է մնացել, եւ, բացի արանից, մնացածի մէջ էլ բաւական թուով թերթերի տառերին մասից զանակով, կարծես դիտմամբ, խորը կարտած է, երեւի չոր ձեռքով: Ծարականներից մէկը մէջ երգվում եւ ինչպէս է անդադար «Գրիգոր լուսաւորիչ»:

Այս ձեռագրի վրա իմ ուշադրութիւնը անցաւ օրերը հրաւիրեց Միքայիլեան հիւանդանոցի վրացի բանասէր արժանապատիւ Վասիլի Կարեւիւմը, որ վրաց ուսեալ քաննականներից է եւ հետաքրքրվում է գրականութեամբ: Նա ինձ հրաւիրեց յատուկ հայերէն բառերն ու նախադասութիւնները կարդալու եւ թարգմանելու համար, շատ տեղ հայերէն բառերն ու նախադասութիւնները եղծված են, եւ ես կարգաւոր խոչարացողի միջոցով:

Հայր Կարեւիւմը ձեռագրում մի տեղ գտելի, որ այս հնութիւնը տասնհորեք դարու գործ է: Մեր կարծիքով՝ հետաքրքիր է պարզել այս ձեռագրի խորհրդաւորութիւնը, մասնաւոր աչ տեսակէտից, որ, եթէ արդարեւ տասնհորեք դարի է եւ հայերէնից քաղված կամ թարգմանված, ապա այդ բանը վրաց եկեղեցականների արդեւ այն ժամանակ, երբ նրանք արդէն բաժանված էին մեզանից եւ երկու ցեղերի մէջ ը գուր ատելութիւն էր սկսված արդէն:

Ծար. քան. Զուգուրեանց

ՆԵՐՔԻՆ ԿՈՒՐՆԻ

Սրեկ, հինգշաբթի, սեպտեմբերի 26-ին, Թիֆլիսի ժողովարանի ամսաբային բանկարանում տեղի ունեցան Թիֆլիսի երկրորդ ընտրողական շրջանի ընտրութիւնները: Ձայնների մեծամասնութիւն ստացան հետեւեալ անձինք. Ի. Ս. Ալիխանեան, Ս. Ի. Անանեան, Ի. Ն. Վ. Արգուտինսկի-Դոյցօրուկով, Բահմա-Բէկ Ախունդով, Ի. Ն. Ա. Բէհրութեան, Ի. Ն. Ա. Բէհրութեան, Ա. Ս. Բուդաշու-Բաղդասարեան, Կ. Մ. Գոնիկ, Ա. Ի. Վարդանեան, Ի. Ի. Գուրգէնքեան, Պ. Մ. Դուրախանեան, Լ. Գ. Եւանգուլեան, Ի. Ա. Յովհաննիսեան, Մ. Զ. Գանանեան, Ա. Ի. Միլով, Ի. Ա. Միլե-Բէկարեան, Ս. Զ. Միլեգուան, Ի. Գ. Փաւրով, Ի. Ա. Սուլխանեան, Ի. Ա. Թայրեան, Գ. Զ. Թամաշեան, Ի. Գ. Թուլայի, Տ. Զ. Էնֆիանջեան եւ Գ. Բ. Տէր-Ասատուրեան: Ընտրվեցան 24 ձայնաւոր եւ երեք կանդիդատ՝ Վ. Գ. Կանդուրեան, Ի. Ի. Ամիրխանեան եւ Ա. Ս. Բեկադեան: Ընտրվելու էին 24 ձայնաւոր եւ 5 կանդիդատ: Ուրեմն մնում է ընտրվելու 2 կանդիդատ, որ պէտք է ընտրվեն կիրակի, սեպտեմբերի 29-ին:

Զօլայի համար հողը պատրաստ էր—Մի խումբ առաքեալներ, առաջաւոր նատուրալիստ բանակն էին կազմել եւ ճանապարհ էին բացել նրա յաղթական գնացքի համար: Եւ Զօլայի հանձնարեղ ուղղել իսկոյն ըմբոսեց ժամանակակից պահանջը, ու անվտանգ իր վէպերի մէջ այն ամեն հրահանգները, ինչ որ առել էին նրան նատուրալիզմի հայրերը, աւելացնելով նրանց ժառանգականութեան բարդ ու խառնիճաղանձ թէօրիան, եւ ստեղծեց մի զանգուած, որը կրում է նաեւ ուրախ իր մանուկը: Զօլայի բոսանիւստութիւնը մարդը իր ամբողջ ֆիզիկական ու հոգեկան կազմով դառնում է արդիւնէ ժառանգականութեան եւ միջնակարգի ժառանգականութեան եւ միջնակարգի ժառանգականութեան: Զօլայի անգուպ ներկայացումները, զգացմունքները եւ զրկում է նրան ինքնուրոյնութիւնից: Մարդը այսպիսով դառնում է մի անկամ լեակ, որ գործում է այսպէս թէ այնպէս, որովհետեւ այդպէս են թելադրել նրա ֆիզիկական կազմը (ժառանգականութիւնը) եւ շրջակայը...

Այս թէօրիայով մարդ դառնում է ճիշտ որ մի ամենը, որը ոչ կաւք ունի, ոչ ինքնուրոյնութիւն: Սա կամքի անկախութեան հերքումն է, մարդկային էակի ստորացումն, ճաւատագրութեան դաւանանքի յաղթանակումն: Սա դե տեր էին ի վրէժն էր, որը ֆատալիզմի հարազատ եղբայրն է. անկախած ֆատալիզմն է կանգնած այս ուղղութեան միւս ծայրում, քանի որ նա ահալին, ամեն ինչ ընկող, ամեն ինչ հպատակեցնող գորութիւն էր վերագրում շրջանին:

(Նը շարունակվի)

Электротпечатная Грива. Издат. Т-ва. Б.-Ванская ул.